

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՋԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ն. Կ. ԹԱԼԻՄԻՉՅԱՆ

Մեր միջնադարյան երաժշտական ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում նախ և առաջ անհրաժեշտ է ժամանակին օգտագործված օժանդակ, հիմնական և վերջիններիս ձևափոխությունների ու ղուգորդությունների միջոցով առաջ եկած բաղմաթիվ նշաններից առանձնացնել հիմնական խաղերի միակցությունը, որը և պայմանականորեն կարելի է խաղագրության արվեստի այբուբենը համարել:

Այս ուղղությամբ կատարվելիք առաջին քայլը միջնադարից եկող համապատասխան տվյալներին ծանոթանալն է: Մեր դրչադիր ու հնատիպ աղբյուրներում պահպանվել են հիմնական խաղերի անունների ու գծագրական ձևերի մի ամբողջ շարք տախտակ-ցուցակներ, որոնք սակայն մինչև այժմ հատուկ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել:

Քննությունը ցույց է տալիս, որ այդ տախտակ-ցուցակները (երաժշտատեսական առանձին, անհեղինակ հատվածներ) բաժանվում են երեք տարբեր խմբերի: Եվ այս փաստն ինքնին հուշում է, թե մեզ զբաղեցնող գործում առավել ճշգրիտ արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է ոչ միայն հաղթահարել բաղմաղան այլագրությունների, թերագրությունների, ավելագրությունների, գրչական վրիպումների, աղավաղումների, բացարձակ սխալների ու հետամուտ կասկածելի տարրերի հետ կապված դժվարությունները, այլև նկատի ունենալ մի հանգամանք ևս, այն, որ բուն միջնադարում էլ հիմնական խաղերի միակցության մասին եղել են տարբեր պատկերացումներ:

Նախ պայմանավորվենք հետևյալի մասին: Խաղային տախտակ-ցուցակների հիշյալ երեք խմբերը տարբերում ենք՝ Ա, Բ և Գ անվանումներով: Հատուկ ընդգծենք, սակայն, որ տառային սույն նմուշները (մանավանդ վերջին երկուսը) բնավ նպատակ չունեն ցույց տալու համապատասխան տախտակների ստեղծման պատմական հաջորդականությունը: Այնուհետև, XV—XVIII դարերի հեղինակների գրվածքներում հանդիպել ենք Ա և Բ ցուցակների տվյալների կրկնությանն ու յուրահատուկ հիմնավորմանը: Եվ սրա վրա հենվում ենք, որպես ձեռագրական համապատասխան անհեղինակ հատվածները նորովի լուսաբանող և դրանց մի հատուկ կշիռ ու նշանակություն հաղորդող իրողության: Բայց սա կապ չունի քննարկվող տախտակների ստեղծման ժամանակի խնդրի հետ: Եվ վերջապես՝ թեև նպատակահարմար էր մեր երեք ցուցակներն էլ քննել մեկ հոդվածի սահմաններում, բայց Բ տախտակը ներկայացնող դրչադիր հատվածների հետադոտությունը ավելի երկար ու մանրակրկիտ աշխատանք է պահանջում, ուստի և դրան կանդրադառնանք ուրիշ անգամ:

Մենք արդեն առիթ ունեցել ենք նշելու, թե մեր տախտակ-ցուցակներից մի քանիսը¹ (դրանք գոյացնում են հենց Ա խումբը), ըստ խաղերի թվարանակի, տնվանակոչության ու նույնիսկ հերթականության, լրիվ համընկնում են խաղերի՝ հաշատուր էրզրումեցու առաջ բերած միակցության հետ²։ Երբով երաժշտատեսական աւհեղինակ հատվածների տվյալները կրկնվում են հայտնի գիտնականի կողմից։

Նույնանման ձևով հարաբերվում են նաև Եփրեմ վարդապետի առաջ բերած խաղերի միակցությունն ու խաղերի միջնադարյան տախտակ-ցուցակների³ խումբը։

Եփրեմ վարդապետը (XVII դար) հեղինակ է աշխարհիկ ու հոգևոր մի շարք տաղերի։ Սովորել է էջմիածնում, աշակերտելով Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսին։ Հետո նշանակվել է Աղբիանուպոլսի առաջնորդ։ Եվ այստեղ, հայաբնակ մի քանի վայրերից հավաքելով սիրված շատ տաղեր, ու դրանց վրա ավելացնելով նաև իր հեղինակությունները, կազմել է մի Տաղարան ու արտագրել տրվել այն 1695 թ.։

Այդ Տաղարանը այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում⁴։ Նրա հիշատակարաններից մեկում էլ հենց գրված է. «Արդ ես նուստ Եփրեմ վարդապետս, որ եմ աշակերտ Սրբոյ էջմիածնի սրբազան հայրապետի՝ տեառն Յակովբայ ամենայն Հայոց կաթողիկոսի, վերափոխեցելոյն առ Քրիստոս ի յոյսն ամենեցուն, իսկ նարգենիս, որ եմ շնորհօքն Քրիստոսի վերատեսուչ մայրաքաղաքիս Անդրիանուպոլսոյ, զոր կարի ըղձամմբ և փափագանօք ժողովեցի հայսքան տաղերս և ոտանաւորներս ի յերկրէ բիւթանացոց, և ի յերկրէն թրակացոց և ի մակեդոնացոց, և գրել ետու ի հալալ արդեանց իմոց, սոյն այս էտրէնէցի տէր Մինաս քահանային, ՌՃԽԴ հայոց թուականին...»⁵։

Սույն տեղեկությունները արդեն իսկ հուշում են, որ Եփրեմ վարդապետի հետաքրքրությունը դեպի տաղերն ու տաղասացությունը՝ պիտի կրած լիներ պրոֆեսիոնալ բնույթ։ Եվ իրոք, նույն Տաղարանի մեկ այլ հիշատակարանում հավաստվում է նրա երաժիշտ լինելը. «Եւ զայս տաղարան գիրքս է Անդրիանուպոլսոյ առաջնորդ՝ երաժիշտ տեառն Եփրեմի, աստուածաբան վարդապետին»⁶։

Այս Եփրեմ երաժիշտ վարդապետը քննարկվող գրչագրի տաղերի շարքում մծթ համարի տակ գետեղել է ոտանավորով գրված մի հիշատակարան եւ («նախկին զաշխարհս որ չէ եղեր»), գրված 1691 թ., որտեղ խոսում է նաև խաղերի մասին։ Դրան ծանոթ է Ռ. Աթայանը, որ հիշատակում է փաստը, որպես ապացույց այն բանի, թե դեռևս XVII դարի վերջում էլ եղել են առանձին տնհատներ, որոնք խաղերով երգել ու իրենց աշակերտներին էլ սովորեցրել են «քաղցրանուագ եղանակներ»⁷։ Եվ դա, անկասկած, ճիշտ է։

¹ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձև. № 6985 (էջ 69ր—70ա), ձև. № 9255 (էջ 413ր) (Այսուհետև՝ ձև. №)։ «Շարակնոց», Ամստերդամ, 1665, էջ 773։ «Շարակնոց», էջմիածին, 1789, էջ 898։ Joachimi Schroder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami, 1711, էջ 244։

² Տե՛ս մեր հոգվածը՝ հաշատուր էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, «Էրարեր հասարակական գիտություններ», Երևան, 1966, № 11։

³ Ձև. № 7717։

⁴ Նույն տեղում, էջ 274ա—274բ։

⁵ Նույն տեղում, էջ 286ր։

⁶ Ռ. Աթայան, Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 106։

Մական Եփրեմ վարդապետի գրվածքը, հատկապես մեղ հետաքրքրող հատվածը, շահեկան է ոչ միայն վերը նշված առումով, նա գրում է.

Աստ գոն ղըրեալ մեղեղիքներ,
պարտ և պատշաճ տաղ և գանձեր:
Սովաւ երգեն վարդապետներ,
քաղցրանուագ եղանակներ:
Ուսուցանեն աշակերտներ,
գաւես դիւր և լեւկ բեկորեալներ:
Խուճն քաւի և բուր ձակորեալներ,
սուր բեր ծոցեր և կորեալներ:
Եւ խաղ ե ղում վերեալսաղեր,
քաւալ փարութ և երեւալսաղեր:
Թաշ և ծրեկիկ հայհայ ճաներ,
կրուր վերեալ քաւալսաղեր:
Աւարտը փուշ միմեալուրեր,
խոսրովային անուն խաղեր:
Ճոր կանխագոյն է ասացեր,
սուրբուն ներսէս հետորն մեր:

Ի Հոռմկըլայն յաթու նրատեր,
հոգով սրբով գայս հաստատեր:
Եւ յիշեսցուք և դարդիքներ,
կանոնադուխ ալիւթներ:
Եւ այլ քաղում մեղեղիքներ,
տաղեր և գանձ շարականներ:
Բայց նարդենիս երգող դու լեր,
որ վարպետաց դաս ես առեր:
Եփրեմ ուրբիդ ողկոյդարեր,
որ երաժիշտ ես անուաներ:
Քաղցրանուագ ալեօքրգ ծեր,
երգես անուշ մեղեղիքներ:
Ջմանկունս ուսոյ տաղ և գանձեր,
նոքա երգեն, գուարթ գու լեր:

Այստեղ հատուկ ուշադրության արժանին այն է, որ Եփրեմ վարդապետը, բացի խաղերով երգելու և ուսուցանելու փաստը վկայելուց, Շարականի, Տաղարանի ու Գանձարանի խաղերի սիստեմը դիտում է որպես մի ամբողջություն (և դա գործնականում էլ հենց կիրառված է տվյալ տաղարանում)։ Ներսես Շնորհալուն ներկայացնում է որպես հիշյալ սիստեմի «հաստատիչը» (հիշատակելով նրա երաժշտական կարևոր ստեղծագործությունները ևս՝ «Յիշեսցուք», «Ջարթիք», այլև առհասարակ՝ ալիւթը, մեղեղիք, տաղք, գանձք և շարականք)։ և որ այժմ մեղ մասնավորապես զբաղեցնում է՝ թվարկում է խաղերի այդ նույն սիստեմի հիմնական նշանների անունները (տե՛ս վերը մեր կողմից ընդգծված անվանումները)։

Նկատի պիտի ունենալ միայն, որ հեղինակը, ակներևաբար, ոտանավորի չափը չխախտելու համար զանց է արել մեկ խաղ՝ հանրահայտ «շեշտը» ու մեկ էլ՝ որ «բենկորճայ», «ձակորճայ», «էկորճայ», «վերնախաղ», «ներքնախաղ» և մի-երկու այլ անվանումներ դուրս է բերել իրենց սովորական կարգավորությունից ու զետեղել տողավերջում՝ հանգ ստեղծելու նպատակով։

Արդեն ասել ենք, որ խաղերի սույն միակցությունը արտացոլված է ձեռագրական տախտակ-ցուցակների Բ խմբում։

Այս խումբը գոյացնող ցուցակները հանդիպում են Մաշտոցի անվան Մատենադարանի առնվազն հինգ գրչագրերում։ 1592 թվականին Կարինի Թվանդ պյուղում արտագրված ժողովածուում⁷, XV—XVI դարերին վերաբերող շարականացներից մեկում⁸, XVI դարում գաղափարված մի ժամագրքում⁹, 1632 թ. Սմիդում օրինակված ժողովածուում¹⁰ և 1641-ին Առաքել գրչի գաղափարած ժողովածուի մեջ¹¹։ Հիշատակելի է նաև Երուսաղեմի թանգարանի հայկական

7 Ձեռ. № 7717, էջ 258ա—258բ։

8 Ձեռ. № 3050, էջ 207ա—208բ։

9 Ձեռ. № 5663, էջ 138բ։

10 Ձեռ. № 594, էջ 10ա։

11 Ձեռ. № 8575, էջ 19ա։

12 Ձեռ. № 7046, էջ 97ա։

ձեռագրերից այն, որից և ժամանակին օգտվել է Ե. Տնտեսյանը¹³։ Պայմանա-
վորվենք սույն ցուցակները նշել համապատասխանաբար՝ a, b, c, d, e, f
տառերով։

Այս տախտակները մեզ տալիս են Բ խմբի խաղերի զծագրական ձևերը ևս։

Բայց այս տախտակները ունեն մի քանի առանձնահատկություններ։
Յորո՞նք պետք է անսլայման հատուկ նշել ու հաշվի առնել և, բացի այդ, դրանք
մեզ հասել են որոշ աղավաղումներով, որոնք հարկ է վերացնել՝ ցուցակները
իրար հետ համեմատելու և, անհրաժեշտության դեպքում, նաև խաղավորված
ձեռագրերին դիմելու միջոցով։

Եթե մի կողմ թողնենք խաղերի անունների տարբերացումների հետ
կապված՝ միջնադարի համար սովորական երևույթը, կարող ենք ասել, որ հիշ-
յալ աղավաղումները հիմնականում վերաբերում են մի շարք նշանների գծա-
գրական ձևերին ու մեկ էլ երկու ցուցակներում առաջ բերված մի-երկու հս-
վելիալ խաղերի խնդրին։

Սկսենք վերջինից։ Մեր բոլոր տախտակ-ցուցակներում հիմնական խա-
ղերի թվաքանակը 28-ն է, որ ճիշտ է նաև ըստ Եփրեմ վարդապետի կատա-
լուծ թվարկման (նրա դանց արած «շեշտն» էլ հաշվելով)։ Միայն երկու ցու-
ցակներում՝ «Ա» ու «Բ», թվով 28-րդ «փուշից» հետո բերվում են հավելյալ
նշաններ։ Այդ ցուցակներից «Ա»-ն ունի երեք հավելյալ նշան. «առուղիք»,
«տաշտիկ» և «չաղր»։ Սբանցից առաջին երկուսի տվյալ կապակցության մեջ
բացարձակ ավելորդ լինելը հասկացվում է հետևյալից։ Ցուցակի հեղինակը
կամ, ավելի ճիշտ, մեկ ուրիշ գրիչ, «առուղիք» հայտնի անվանումը բերելով,
դրան կցել է «զարկի» նշանը, որովհետև վերջինս նույնպես աղավաղված է իր
տեղում, ընդունելով «փուշի» ձևը։ Դարձյալ գրիչը «տաշտիկ» հետաքրքիր
անվանմանը կցել է «խունձի» նշանը, որովհետև սա էլ իր տեղում սխալմամբ
գծագրված է «Էկորձի» ձևով։ Այսպիսով, մի սխալը մեկ ուրիշ սխալ է առա-
ջացրել։ Իսկ «չաղրի» մասին պիտի ասել, որ այս բոլորովին նոր, ու ըստ բոլոր
տվյալների, օտարոտի անվանման կցված նշանը խաղերի տախտակ-ցուցակ-
ների Դ խմբում¹⁴ մշտապես հանդիպող «ծանրատրույ» կոչված նշանն է և,
հետևաբար, հենց այնտեղից է անցել այստեղ։ Մյուս ցուցակը՝ «Բ», «փուշից»
հետո ունի երկու հավելյալ խաղ. «կրտվէ» ու «յետ ձղէ»։ Առաջինը երեք հիմ-
նական խաղերից՝ «հենկորձից», «ներքնախաղից» ու «պարոյկից» (որ պետք
է լինի «ծոցբեր», ինչպես երևում է գրչադիր երգարաններից) կազմված զու-
յորդություն է ներկայացնում իրենից. իսկ երկրորդի զծագրական ձևն է՝ տո-
ղից վերև գրվող մի «ստոր»։ Դատելով անուններից, երկուսն էլ մեղեդիի կա-
տարման վերաբերող մեթոդական կարևոր ցուցումներ են բովանդակում, սա-
կայն լուկ այս հանդամանքը հիմք չի կարող հանդիսանալ, որպեսզի տվյալ
նշանները տեղագրենք հիմնական խաղերի Բ խմբի շրջանակների մեջ։ Բավա-
կան է ասել, որ դրանցից երկրորդը, օրինակ, «վերադիր» անվան տուկ իր
ուրույն տեղն ունի դարձյալ՝ Դ խմբի խաղերի համակարգում։

¹³ Ե. Տնտեսյան, Աղգսյին երաժշտություն, «Սիոն», 1867, № 9, էջ 147 (տե՛ս այստեղ
հրատարակված փաստորեն երկու խաղացուցակներից երկրորդը, որ սկսում է «շեշտից»)։

¹⁴ Մյուս վերաբերող ձեռագրական հատվածներին հանդիպում ենք Մաշտոցի անվ. Մատե-
նադարանի երեք ձեռագրերում (№№ 605, էջ 47ր, 2068, էջ 356ր, 8307, էջ 310ր—311ա) ու նաև
«Սիոնի» ձեռք նոր հիշատակված համարում (տե՛ս այստեղ Տնտեսյանի հրատարակած ցուցակ-
ներից առաջինը, մինչև «շեշտը»)։

Անցնելով Բ խմբի 28 հիմնական խաղերի զծագրական ձևերին վերաբերող աղավաղումներին, առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ ընդհանուր կարգի մեկ սխալի: Գրեթե բոլոր ցուցակներում «փուշի» նշանը աղավաղվելով վերածվել է «շեշտի» ձևին: Այս սխալը ուղղվում է՝ դիմելով բուն խաղավորված զրչագրերին¹⁵:

Մնացած աղավաղումները սլատակային բնույթի են: Դրանցից են, օրինակ, «շեշտի» սխալ մի ձևը «ձ»-ում և նրա թերագրությունը «Է»-ում. «էկորճի» ալագրությունները «ձ»—«Ը», «ձ»—«Է» տախտակներում և նրա աղավաղումները «Կ»-ում և «Բ»-ում. «զարկի» աղավաղումը «ձ», «Ը» ու «Բ» ցուցակներում, որով նա ընդունել է «փուշի» ձևը. «խունճի» աղճատումը «Ը», «Ձ» ու «Է» ցուցակներում, որով նա ընդունել է «էկորճի» ձևը. «դումի» նշանի վերածումը «բենկորճի» «Ը», «Է» ու «Բ» ցուցակներում. «բերի» նույնացումը «ծունկի» հետ՝ «Բ»-ում. «միմնաուրի» աղավաղումը «Ը»-ում և նրա թերագրությունները «Կ» ու «Բ» տախտակներում. «ձակորճի»՝ «դակորճ» կամ «դակորճայ» սխալ ընթերցումները «ձ» և «Բ» տախտակներում և այլն: Որանք էլ շտկվում են հենց իրենց՝ քննարկվող ցուցակների իսկ համեմատությամբ, և դարձյալ՝ խաղավոր ձևագրերի տվյալների հաշվառման միջոցով:

Նշեցինք, որ այս տախտակ-ցուցակներին հատուկ են նաև կարևոր առանձնահատկություններ: Դրանք բաժանվում են երեք կարգի ու կապված են՝ որոշ նշաններ կրկնապատկված ձևով զծագրելու, մի քանի խաղալիս նշաններ իրենց տարբերակներով հանդերձ ներկայացնելու, ու մի շարք խաղեր էլ կետերով ձևափոխված վիճակում առաջ բերելու հետ:

Քննարկվող տախտակներում կրկնապատկված ձևով ներկայացված են «բենկորճի» ու «ձակորճի» նշանները: Առաջինի կրկնապատկումը հանդիպում է բոլոր վեց ցուցակներում. իսկ երկրորդին՝ վեցից չորսի մեջ: Ձևակերպված այս երկու խաղավոր հին ձևագրերի ընդհանուր տվյալների լույսի տակ, հասկանում ենք, որ դա ոչ այնքան սխալմունքի, որքան գործնականում հիշյալ երկու խաղերի կրկնապատկումների կիրառության հաճախականությունը արտահայտելու և ընդգծելու ձգտման արդյունք է: Այդուամենայնիվ, հնարավոր չենք համարում սույն կրկնապատկումները թողնել այնպես, ու որպես հիմք չվերցնել դրանց պարզ ձևերը:

Այլ վերաբերմունք է պահանջում, սակայն, երկու խաղերի՝ «փաթուրի» և «խոսրովայինի» զծագրական ձևերի տարբերակների խնդիրը: Վեց ցուցակների տվյալները համատեղելիս տեսնում ենք, որ սույն խաղերի նշանները ներկայանում են երկուական տարբերակով: Եվ որովհետև այդ տարբերակները գրեթե ամեն քայլափոխի հանդիպում են նաև խաղավոր զրչագրերում, դրանք ընդունում ենք որպես այս կամ այն ճանապարհով ընդհանրացած հիմնաձևեր:

Վերջապես, կետերով ձևափոխված վիճակում առաջ բերված խաղերն են՝ բոլոր ցուցակներում երկու կետով զծագրված «թուրն» ու «սուրը». հինգ ցուցակում մեկ, իսկ «Բ»-ում երկու կետ կրող «թաշտը». բացի «Ը»-ից մյուս բոլոր տախտակներում մեկ կամ երկու կետով «խոսրովայինը» (իր տարբերակներով). «ձ», «Կ», «Ձ» ու «Է» տախտակներում երկու կետավոր «բարձրահարի»

15 Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարանի N 1576 բնօրինակը (Գրադարկ, 1328), որտեղ գրիչը «շեշտի» երկու տարբեր (Ա և Բ խմբերին համապատասխանող) ձևերն էլ օգտագործելով հանդերձ՝ «փուշի» նշանը միշտ գծում է առանց որևէ աղճատման:

րբ, «Ի», «Շ» և «Ճ» ցուցակների մեջ երկու կետավոր «ծնկիկ» (որ պիտի կարգալ՝ «ծնկիկ») և մի-երկու այլ նշան: Հետազոտությունը ցույց է տալիս, որ քննարկվող տախտակ-ցուցակներին հատուկ այս երեւոյթը նույնպէս, ինչպէս և վերը հիշված նշանների կրկնապատկման պարագան, սերտ կապված է խաղաղրված հին ժողովածուներում կետերով ձևափոխված մի ամբողջ շարք խաղերի հաճախակի գործածութեան հետ. և որ այս կարգի խաղերից շորսը մեկ կետով «էկորճ» ու «ձակորճ» և երկու կետով «թուրն» ու «սուրբ» պիտի ընդունել որպէս խաղերի Ք խմբի միակցութեան շրջանակներում ընդհանրացած ձևեր¹⁶: Մանավանդ, երբ նկատի ենք ունենում մեկ կետով «թուրն» և «սուրբ» հաճախակի կիրառությունը ես, ու նաև Ռ. Աթայանի թեկուզ և քննելի այն գիտողությունը, թե՛ «համեմատությունը ցույց է տալիս, որ մեկ կետը թերագրություն է և նույն նշանակությունն ունի, ինչ որ երկու կետը»¹⁷:

Խիստ կարևոր է նշել, որ խաղերի տարրեր տախտակ-ցուցակների տվումները համեմատելիս կետերով ձևափոխված մի քանի նշան և առաջին հերթին հենց «թուրն» ու «սուրբ» հաշվի է առել Կոմիտասը ես¹⁸:

Նախընթացի հիման վրա ստորև բերում ենք Ք խմբի խաղերի համեմատված-նշագրված տախտակ-ցուցակը.

ՇԷՐ ✓	սուր 7	Վերնագր	Թուր ✓
ՉԵՐ ✓	բար Ը	Երեւոյթ	ՃԷՐ ✓
ԴԵՐ ✓	Երեւոյթ Թ	Զուր ✓	ԳԷՐ ○
ՉԵՐ 001	Զեկորնայ	Խորագր	Թուր Թ
Թուր Թ	Զեկորնայ Թ	Զուր Թ (Թ/Թ)	Վերնագր
ԶԷՐ ~	Զեկորնայ	Զուր Թ	Զեկորնայ
Թուր Թ	Զուր ~	Զեկորնայ, Զեկորնայ, Զեկորնայ Թ	Զուր ✓

Սա է խաղերի այն միակցությունը, որի մասին խոսում է Օփրեմ Երանյան վարդապետը: Օվ ստ զգալի տարբերություններ ունի այն տախտակ-ցուցակի համեմատությամբ, որ արտացոլում է Ա խմբի խաղերը, և որի տվումները երկրորդված են, առաջինը, Խաչատուր Էրզրումեցու կողմից:

Տեսնենք, թե ինչպիսին են այդ տարբերությունները: Համեմատության համար որպէս հիմք վերցնենք Ա խմբի խաղերի կարգավորությունը:

¹⁶ Դիտելի մի պարագա է, որ «ձակորճ» միակ խաղն է, որի մեկ կետով ձևափոխված գծագրական ձևը Ա խմբի խաղերի միակցութեան մեջ եւ ընդունել է հիմնածնի նշանակություն:

¹⁷ Ռ. Աթայան, Ելվ աշխ., էջ 180:

¹⁸ Գրականութեան և արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, Խաղարանական նյութեր, Մ 664: Ինչպէս երևում է Կոմիտասի կրճատ նշումներից եւ ձևերի տակ ունեցել է միայն ապագրված հետնյալ տախտակ-ցուցակները՝ «Հանգեւ ամսորյառ»-ում Տրգ. եւ, Պայլանի հրատարակած ցուցակը (1892, Մ 4, էջ 124), որ Գրիգոր Գաղափարաւայանի մեկ շնամտ ձևագիր մի ոչ-խառնությունից է. նույն Գաղափարաւայանի «Գրքոյի որ Կոյի նուագարան» աշխատութեանում բերվող ցուցակը (Կ. Պոլիս, 1794, էջ 216), «Բազմակերպ»-ում Իզն. Կյուրեղյանի հրատարակած աւիտակը (1904), Մ 6, էջ 200—203), որ վերցված է Վիլյամսի գրքից (M. Villoteau, Description de l'Egypte, tome XIV, Paris, 1826, p. 330), աշխատանք «Սիւն»-ում Եզ Տեանյանի առաջ բերած աւիտակը (1867, Մ 9, էջ 146—148), վերջապէս՝ Ֆեաթի գրքում եզածը (F. Feiss, Histoire générale de la musique, tome IV, Paris, 1874, p. 87), ու մեկ էլ Շրյոդերի արգեն հիշատակված աշխատութեանում հանդիպող աւիտակը:

Ա	Ք
շեշտ /	շեշտ /
փուշ ✓	փուշ ✓
բուք \	շիք \
պարսկե լ	բեր լ
երկար լ	քաշ լ
սուշ օ	գլոր օ
սուք /	սուք /
թուք /	թուք /
հուշեկ օ	—
թաշտ լ	թաշտ լ
ուշարակ լ	հոշ քեր լ
խուշեկ լ	խուշեկ լ
վերնախառ լ	վերնախառ լ
ներքնախառ լ	ներքնախառ լ
քեշեկորեկ լ	քեշեկորեկ լ
խոսքալային լ	խոսքալային լ
հեկեկ օ	հեկեկ օ
եկորեկ լ	եկորեկ լ
հեկորեկ լ	հեկորեկ լ
խուշ լ	խուշ լ
փաթուշ լ	փաթուշ լ
քաշքաշ լ (լու)	քաշքաշ լ (լու)
հուշեկ լ	հուշեկ լ
զաշեկ լ	զաշեկ լ
—	լուշ օ
—	խաշ լ
—	քաշքաշ լ
—	վերքաշ լ
—	սիմեալ լ

Ինչպես պարզ երևում է, Ա և Բ տախտակները նախ և առաջ տարբերվում են իրենցում ներամփոփված խաղերի թվաքանակով: Առաջինը ունի 24, իսկ երկրորդը՝ 28 նշան: Բ-ն չունի «ծունկը», որ խաղավորը զրչազրերում հանդիպում է: Իսկ Ա-ն չունի գործնականում նույնպես կիրառված «լերկը», «խաղը», «բարձրահարերը», «վերքաշը» և «միմնաւորը»:

Ի դեպ, վերջին երեք նշաններից «վերքաշն» ու «միմնաւորը» զուգորդություններ են՝ բաղկացած երեքական խաղից. իսկ «բարձրահարերը» Բ տախտակի «ծոցերից» է առաջացել: Ուրեմն հարց է, թե ինչու սբանք դասվում են հիմնական խաղերի շարքում:

Հայտնի է, որ հայկական խաղազրույթյան մեջ գործածված խաղային այս զուգորդությունների կամ համակցությունների մասին երկու տարբեր կարծիքներ են եղել: Ըստ Ն. Տնտեսյանի «այն խաղերը, որք միշտ միևնույն կարգով միմյանց քով կդրվին, մասնավոր խաղ համարվելու են, և ոչ անջատյալ, մանավանդ որ ասոնց մեկ-երկուքը մասնավոր անուն ալ առած են»¹⁹...: Մ. Աթսյանի կարծիքով խաղերը տարբեր համակցությունների մեջ «որեւէ նոր արժեք չեն ստանում... այլ թե՛ ինտոնացիայի և թե՛ տեղոյթյան տեսակետից պահպանում են իրենց նախկին արժեքները... կատարվելով խոսքի մեկ վանկի շնորհիվ»²⁰:

Ըստ բոլոր տվյալների, այս երկու դիտողություններն էլ զուրկ չեն ճշմարտությունից, միայն թե դրանց հիմքում ընկած երևույթն ինքնին բաղմակողմանի է: Համակցություններ կան, որոնք, իրոք, իրենց բաղկացուցիչների պարզ դումարն են ներկայացնում: Այդպիսի «զումարված» ուղիղ-ինտոնացիաները, սակայն, կարող են լինել և մեղեդիական տիպական դարձվածքներ («մասնավոր խաղեր»): Իսկ սրանցից ոմանք էլ կարող են իրենց մեջ հիշյալ «զումարի» համեմատությամբ մի նոր մոմենտ ևս ընդգրկել:

Ահա այս վերջին կարգի դարձվածքներից երեքն են, որ հատուկ նշաններով ու անուններով տեղ են գտել Բ տախտակում: Դրանցից «բարձրահարերի» ու «վերքաշի» մասին պիտի ասել, թե դատելով սույն անուններից, նորն ալստեղ, տվյալ համակցությունները դոյացնող սուանձին խաղերի նշանակության դումարի համեմատությամբ, հարկ է փնտրել առնվազն «բարձր» ու «վեր» խոսքերի իմաստի մեջ, որոնք մեղեդին զեպի ավելի բարձր մի ուղիստը տանելու ցուցմունքն են տալիս: Ինչ վերաբերում է «միմնաւորին», սույն անվան ստուգաբանության մեջ խորանալ թեպետե հնարավոր չեղավ, միայն դատելով նրա դժագրական ձևից, ու նաև Բ տախտակի խաղերի ընդհանուր կարգավորության մեջ դրաված տեղից, նաև, հարելով նախորդ երկուսին, մեղեդին զեպի վեր տանող մի նշանակություն էլ ունի: Ահա թե ինչու խաղային այս երեք նշանները Բ տախտակում տրվում են որպես հիմնածանց:

Ա և Բ տախտակների մյուս տարբերությունները հանգում են հետևյալին: Հինգ խաղանշաններ տախտակներում ունեն նույն կամ զրեթե նույն դժագրականները, բայց տարբեր անուններ. «բուլ» — «դիր», «պարոյկ» — «բեր», «երկար» — «բաշ», «սուղ» — «պլոր», «ոլորակ» — «ծոց բեր»:

¹⁹ Ն. Տնտեսյան, Տեսութիւն Շարականի երգոց խաղերուն, հավելված «Ժամանակ» հանդեսի N 45-ի, Կ. Պոլիս, 1864, էջ 153:

²⁰ Մ. Աթսյան, նշվ. աշխ., էջ 268:

Իսկ հինգ այլ խաղանշաններ՝ «շեշտը», «էկորնը», «խումը», «փաթուխն» ու «հուհայը», ընդհակառակը՝ ունեն նույն կամ գրեթե նույն անունները, բայց տարբեր զծագրաձևեր։ «Թուրի» և «սուրի» տարբերությունները ցուցակներում միայն կետերի հաշվին են։ «Խոսրովայինը» Բ տախտակում ունի զծագրաձևի մի երկրորդ տարբերակ ևս։

Ամբողջությամբ վերացրած՝ Բ տախտակը քիչ ավելի ուշ շրջանի, ու նաև մի նոր միջավայրի արդյունք է։ Այն ավելի ճոխ է. ներամիտիում է ավելի շատ թվով հիմնախաղեր, գործածում է կետերով ձևափոխված ավելի շատ նշաններ (որպես հիմնաձևեր), և մի երկու նշանի համար ունի զծագրական ձևերի ընդհանրացած տարբերակներ, որ արդեն ինքնին դարգացման արդյունք է։

Ըստ բոլոր տվյալների, պատահական չէ, որ Եփրեմ վարդապետը որպես Բ տախտակի խաղերի «հաստատիչ» նշում է ներսես Շնորհալուն։ Մանավանդ որ այդ խաղերը օգտագործված ենք տեսնում հատկապես կիրիկյան ձեռագրերում։ Բայց այս հարցին քիչ ավելի հանգամանորեն անդրադառնալ հնարավոր կլինի Գ խմբի խաղերի միակցությունը քննելիս։

Առավել կարևորն այն է, սակայն, թե մասնավորապես մեր Ա և Բ տախտակների տարբերությունները ինչպես են արտացոլված բուն խաղավոր գրչագրերում։ Այս կապակցությամբ պիտի ասել, որ ձեռագրերում Ա և Բ խմբի խաղերի անջատ կիրառությանը չենք հանդիպում, մի բան, որ շատ կհեշտացնեք ուսումնասիրությունը։ Երազվեալոր պատճառն այն է, որ XIII—XIV դարերի կիրիկյան ընտիր ձեռագրերը աստիճանաբար տարածվելով Հայաստանում և հայաբնակ բոլոր գաղութներում, իրենց կնիքն են դրել նշված և ավելի ուշ դարերի մեր գրեթե բոլոր խաղավոր գրչագրերի վրա։ Բայց Ա խմբի խաղերի միակցությունն էլ անհետ չի կորել։ Ա և Բ խմբի խաղերը խառնվել են իրար։

Եվ այդ խառնուրդից էլ հենց բան հասկանալու իմաստով նույնպես շատ ու շատ օգտակար են խաղերի միջնադարյան տախտակ-ցուցակների քննությունն ու համեմատությունը։

Այս ասպարեզում ձեռք բերվածը թեպետև հարկավոր է ամփոփել Գ խմբի խաղերի տախտակների քննությունից հետո, այստեղ անհրաժեշտ ենք համարում մի փոքրիկ օրինակ բերել ու հանձնել ընթերցողի ուշադրությանը ու դրանով էլ ավարտել ներկա հոդվածը։

Ինչպես տեսանք, «շեշտը» Ա և Բ տախտակներում զծագրական տարբեր ձևեր ունի։ Այդ տարբերությունը խաղաբանությունից քիչ հեռու կանգնած գիտնականին այժմ կարող է «չնչին» թվալ։ Սակայն պիտի իմանալ, որ հնագույն ձեռագիր ու հնատիպ ընտիր շարականոցներում իսկ «շեշտի» երկու ձևերն էլ առատ օգտագործված են, նույնիսկ միևնույն երգում²¹։ Այս իսկ պատճառով, XVIII—XIX դարերի մեր երգիչ-երաժիշտներից շատերը «շեշտի» Բ տախտակին համապատասխանող նշանը ընդունել են որպես տարբեր մի խաղ։ Գր. Գալստիսյանը դրան տվել է «փշաղարձ» նորահնար անունը²²։ Ե. Տնտեսյանը գիտական հոտառությամբ զգացել է, որ «շեշտն» ու «փշաղարձը» նույն բանն

²¹ Տե՛ս ձեռ. N 1576, ձեռ. N 1612 (որտեղ մինչև էջ 10-ը կիրառված է «շեշտի» Բ տեսակը, իսկ հետո՝ նաև Ա տեսակը), էջմիածնում 1789-ին լույս տեսած հնատիպ «Շարափնոց»-ը և այլն։

²² Գր. Գալստիսյան, Երբոյկ որ կոչի նուազարան, Կ. Պոլիս, 1794, էջ 217։

են փաստորեն²³։ Ռ. Աթայանը գրչագիր ու հնատիպ խաղաղոր շարականոցների վրա համեմատական աշխատանքներ կատարելով եկել է նույն եզրակացության²⁴։ Իսկ Ա և Բ ցուցակների համեմատությունից դա շատ պարզ երևում է։

О ДВУХ ТАБЛИЦАХ ОСНОВНЫХ ЗНАКОВ АРМЯНСКИХ НЕВМ

Н. К. ТАГМИЗЯН

(Р е з ю м е)

Изучение армянских средневековых невменных (хазовых) рукописей прежде всего предполагает выделение совокупности основных невм и их отличие от всякого рода вспомогательных, измененных и производных знаков. Соответствующие данные, идущие от средневековья и представляющие собой целый ряд рукописных отрывков, а также таблиц невм, предлагаемых известными средневековыми армянскими авторами, говорят о том, что у средневековых армян были разные представления о совокупности основных невменных знаков.

В статье приводятся и сравниваются таблицы основных невм, предлагаемые Епремом-вардапетом (XVII в.) и Хачатуром Эрзрумеци (XVII — XVIII вв.).

²³ Ե. Տ և տ և յ ա ն, եղվ. աշխ., «Ժամանակ» հանդեսի հավելվածում, 1864, թ. 153։

²⁴ Ռ. Ա թ ա յ ա ն, եղվ. աշխ., էջ 173—174։